

IHSS ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ

ՎԵՐՋՆԱԿԱՆ - ՍՅԵՆԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՐ

Կալիֆորնիայի Տնային աջակցության ծառայությունների ծրագիրը, որն ավելի հայտնի է որպես IHSS, հնարավոր է դարձնում որակավորվող տարեց, կույր, և/կամ հաշմանդամ անձանց համար ապահով մնալ իրենց սեփական տներում, որտեղ նրանք կարող են վայելել անձնական ազատությունն ու անկախությունը, և շարունակել լինել իրենց համայնքի մասը:

Այս տեսահոլովակը կբացատրի IHSS ծրագրի փոփոխությունները, որոնք կարող են ազդել ստացողների ու մատակարարողների վրա, և որոնք վերաբերվում են արտաժամյա և ճամփորդության ժամանակի վճարմանը. Այն նաև ընդհանուր տեղեկություններ կներկայացնի Արդար աշխատանքի ստանդարտների ակտի, կամ FLSA, պահանջների մասին, և ինչպես են դրանք կիրառվելու Կալիֆորնիայում:

Շատ ստացողների ու մատակարարողների վրա այն բոլորովին չի ազդի, քանի որ արտաժամյա և ճամփորդության ժամանակը կիրառելի չէ իրենց անհատական դեպքում:

Իրական ազդեցությունը կզգացվի այն մատակարարողների համար, ովքեր աշխատում են ավելի քան 40 ժամ ամեն աշխատանքային շաբաթում, այն մատակարարողների համար, ովքեր աշխատում են մի քանի ստացողների համար, կամ այն մատակարարողների համար, ովքեր ճամփորդում են ուղղակիորեն մեկ ստացողի տնից մյուս ստացողի տուն նույն օրը:

Կարող են նաև լինել խախտումներ՝ իրենց հետևանքներով, երբ FLSA պահանջներին ճիշտ չեն հետևում. նրանք, ում մանրամասն

տեղեկություն է հարկավոր, կարող են վերանայել լրացուցիչ նյութեր, որոնք տրամադրվում են այս թեմայի շուրջ:

Կալիֆորնիա նահանգի օրենքի փոփոխություններն այժմ պահանջում են վճարվող արտաժամյա և ճամփորդության ժամանակի փոխհատուցում մատակարարողների համար, որոշ պայմաններով ու որոշակի սահմանափակումներով: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնելու 2016 թ. փետրվարի 1-ից:

Կարող են նաև լինել խախտումներ՝ իրենց հետևանքներով, երբ այս օրենքներին ճիշտ չեն հետևում: Խախտումների հետևանքներն ուժի մեջ են մտնելու 2016 թ. մայիսի 1-ից:

Մենք հույսով ենք, որ այս տեսահոլովակը կօգնի ստացողների և մատակարարողներին ավելի լավ հասկանալ և պատասխանել իրենց ունեցած որևէ հարցերին IHSS փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են արտաժամյա և ճամփորդության ժամանակի համար վճարմանը:

Նախքան փոփոխությունները վերանայելը, անդրադառնանք մի քանի կարևոր տերմիններին, որոնք ստացողները և մատակարարողները պետք է իմանան. Ամսական հաստատված ժամեր Առավելագույն շաբաթական ժամեր աշխատանքային շաբաթում Արտաժամյա, ճամփորդության ժամանակ և Խախտումներ:

Եկեք սկսենք Ամսական հաստատված ժամերից:

Մենք ցանկանում ենք, որ դուք լավ հասկանաք այս թիվը, քանի որ այն մեծ նշանակություն ունի այն հարցում, թե ստացողներն ինչ կարող են խնդրել իրենց մատակարարողներից, և մատակարարողներն ինչ կարող են հայցել սովորական և արտաժամյա վճարման համար: Այս ամսական հաստատված ժամերն այն ընդհանուր IHSS ծառայության ժամերի քանակն է, որը լիազորված է ստացողի համար յուրաքանչյուր ամիս: Հաստատված ժամերի քանակը յուրաքանչյուր ստացողի համար որոշվում է վարչաշրջանի IHSS գործընթացի միջոցով:

Այնուհետև մենք ունենք IHSS աշխատանքային շաբաթ, որը սկսում է

կիրակի, ժամը 12 a.m.-ից և ավարտվում է հաջորդ շաբաթ օրը, ժամը 11:59 p.m.-ին:

Հասկանալը, թե երբ է սկսում աշխատանքային շաբաթը ու երբ է ավարտվում, կօգնի ստացողներին և մատակարարողներին հետևել նրան, թե քանի հաստատված ժամեր են պլանավորված, քանիսն են աշխատած, և թե արդյոք մատակարարողն իրավասու է արտաժամյա փոխհատուցման համար:

Մենք նաև ունենք Առավելագույն շաբաթական ժամեր, ինչը ծառայության ժամերի այն քանակն է, որը լիազորված է ստացողի համար յուրաքանչյուր աշխատանքային շաբաթում: Այս քանակը հաշվարկվում է բաժանելով ստացողի ամսական հաստատված ժամերը չորսի:

Այս հաշվարկումը ուղեցույց է ստացողին տեղեկացնելու համար ժամերի առավելագույն քանակի մասին, որն իրենց մատակարարողները կարող են աշխատել մեկ աշխատանքային շաբաթում: Օրինակ՝ ստացողը, որն ունի 200 ամսական հաստատված ժամ, ունի «մինչև» 50 առավելագույն շաբաթական ժամ: «Մինչև»-ը կարևոր է, քանի որ յուրաքանչյուր ամսվա տևողությունը տարբեր է:

Հաշվարկումը հավասար է փետրվար ամսվա համար, որն ունի 28 օր, և հավասար բաժանվում է չորս ստանդարտ 7-օրական շաբաթվա: Սակայն, քանի որ ամիսների մեծամասնությունը չորս շաբաթից մի քիչ երկար է, առավելագույն շաբաթական ժամերը միշտ չէ, որ հավասար են իրական աշխատած ժամերին մեկ շաբաթում:

Ստացողները պետք է հատկացնեն իրենց ամսական հաստատված ժամերը ողջ ամսվա ընթացքում՝ հավաստիանալու համար, որ ունեն բավական ժամեր իրենց հաստատված ծառայությունները ծածկելու համար մինչև ամսվա վերջ: Սա մասնավորապես կարևոր է այն ամիսների համար, որոնք ունեն 30 ու 31 օր, քանի որ պետք է բավական ժամեր մնան մատակարարողների աշխատանքի ու խնամքի շարունակական տրամադրման համար:

Երկու այլ նշումներ առավելագույն շաբաթական ժամերի մասին:

Մեկ մատակարարող ունեցող ստացողի համար, և մատակարարող,

որը չի աշխատում այլ ստացողների համար. այդ դեպքում առավելագույն շաբաթական ժամերը կլինեն նրանց ամսական հաստատված ժամերը՝ բաժանած չորսի:

Այն մատակարարողի համար, որն աշխատում է մեկից ավելի ստացողների համար, այս մատակարարողը չի կարող աշխատել 66 ժամից ավել աշխատանքային շաբաթում:

Սկսած 2016 թ. փետրվարի 1-ից՝ ստացողները ծանուցում կստանան փոստով, որը ցույց է տալու իրենց առավելագույն շաբաթական ժամերը: Այս ծանուցումը կոչվում է IHSS ծրագրի ծանուցում ստացողին առավելագույն շաբաթական ժամերի վերաբերյալ, որը հայտնի է նաև որպես SOC 2271A:

Մատակարարողները նույնպես կստանան առանձին ծանուցագիր փոստով, որը ցույց է տալու Առավելագույն շաբաթական ժամերը իրենց յուրաքանչյուր ստացողի համար, և ծառայությունները, որոնք նրանք կարող են տրամադրել այդ ժամերի ընթացքում: Այս ծանուցագրումը կոչվում է IHSS ծրագրի ծանուցում մատակարարողին ստացողի ժամերի և ծառայությունների վերաբերյալ և առավելագույն շաբաթական ժամերի վերաբերյալ, որը հայտնի է նաև որպես SOC 2271:

Այժմ եկեք սահմանենք ևս մի քանի տերմիններ, նախքան առաջ շարժվելը:

Մատակարարողներն այժմ իրավասու են արտաժամյա վճարում ստանալ: Արտաժամյա վճարման դրույքը հաշվարկվում է մեկ ու կես անգամ սովորական վճարման դրույքի չափով:

Մատակարարողները վճարվելու են արտաժամյա վճարման դրույքով բոլոր ժամերի համար, որոնք իրենք աշխատել են 40 ժամից ի վեր աշխատանքային շաբաթում:

Այնուամենայնիվ գոյություն ունի սահմանափակում արտաժամյա վճարման քանակի համար: Մենք կքննարկենք այս սահմանափակումներն ավելի ուշ այս տեսահոլովակում:

Այն մատակարարողները, որոնք աշխատում են մեկից ավելի ստացողների համար տարբեր վայրերում նույն աշխատանքային օրը, այժմ իրավասու են վճարում ստանալ ճամփորդության ժամանակի համար: Մատակարարողին կարող են վճարել մինչև ընդհանուր 7 ժամ ճամփորդության ժամանակի համար աշխատանքային շաբաթում:

Ճամփորդության ժամանակն այն ժամանակն է, որը պահանջվում է մատակարարողին ուղղակիորեն ճամփորդելու համար մեկ ստացողին ծառայություններ տրամադրելուց դեպի մյուս ստացողին ծառայություններ տրամադրելը նույն աշխատանքային օրը: Ճամփորդության ժամանակի համար վճարումը չի հանվելու իրենց ստացողների ամսական հաստատված ժամերից:

Սկսած 2016 թ. մայիսի 1-ից՝ որևէ մատակարարող, ով ժամանակացույց է ներկայացնում՝ զեկուցելով ժամեր, որոնք գերազանցում են աշխատանքային շաբաթվա կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները, խախտում կստանա ծանուցման հետ միասին, թե ինչպես կարող է վարչաշրջանի կամ նահանգի վերանայում խնդրել:

Կարևոր է, որ մատակարարողները հետևեն արտաժամյա ու ճամփորդության ժամանակի բոլոր սահմանափակումներին, որպեսզի խուսափեն խախտում ստանալուց:

Այժմ, երբ մենք դիտարկեցինք հիմնական տերմինները, եկեք խոսենք նոր ու թարմացված ձևաթղթերի մասին, որոնք բխում են IHSS ծրագրի փոփոխություններից: Մենք կուսումնասիրենք երեք կարևոր ձևաթղթեր ու նրանց ժամկետներն այս տեսահոլովակում.

- թարմացված IHSS ծրագրի մատակարարողի անդամագրման պայմանագիր, որը հայտնի է նաև որպես SOC 846,
- IHSS ծրագրի մատակարարողի աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի պայմանագիր, որը կոչվում է նաև SOC 2255,
- IHSS ծրագրի ստացողի և մատակարարողի աշխատանքային շաբաթվա պայմանագիր, որը հայտնի է նաև որպես SOC 2256:

Մատակարարողները պետք է անպայման լրացնեն և ներկայացնեն բոլոր իրենց կիրառելի ձևաթղթերը: Չնայած, որ մատակարարողները ստորագրել են SOC 846-ը, երբ առաջին անգամ դարձել են IHSS մատակարարող, նրանք պետք է կարդան ու ստորագրեն թարմացված SOC 846-ը, որը վերջերս ուղարկվել է նրանց՝ ցույց տալու համար, որ հասկանում են նոր աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումները:

Թարմացված IHSS ծրագրի մատակարարողի անդամագրման պայմանագիրը բացատրում է նոր աշխատանքային շաբաթվա սահմանափակումները: Ստորագրելով այս պայմանագիրը՝ մատակարարողները հաստատում են, որ կարդացել են և հասկացել են այս նոր սահմանափակումները:

ԲՈՒՈՐ IHSS մատակարարողներից պահանջվում է լրացնել, ստորագրել ու վերադարձնել այս պայմանագիրը վարչաշրջան մինչև 2016 թ. ապրիլի 15-ը: Եթե մատակարարողները չվերադարձնեն ստորագրված պայմանագիրը մինչև 2016 թ. ապրիլի 15-ը, նրանք կհեռացվեն IHSS մատակարարողի աշխատանքից 2016 թ. մայիսի 1-ի դրությամբ, իսկ եթե հեռացվեն, ապա չեն վճարվելու որպես IHSS մատակարարող:

Նոր մատակարարողները, որոնք մասնակցում են կողմնորոշմանը 2016 թ. ապրիլի 15-ից հետո, պետք է լրացնեն ու ներկայացնեն այս պայմանագիրը, նախքան ժամանակացույցներ ստանալը:

Այն մատակարարողները, որոնք աշխատում են մեկից ավելի ստացողների համար, պետք է նույնպես լրացնեն IHSS ծրագրի մատակարարողի աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի պայմանագիրը: Այս պայմանագիրը բացատրում է աշխատանքային շաբաթը, 7 ժամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները, և ներառում է հատվածներ մատակարարողների համար, որպեսզի պլանավորեն աշխատանքային շաբաթվա ժամատախտակները ու գրանցեն մոտավոր ճամփորդության ժամանակը ստացողների միջև:

Այս պայմանագիրը լրացնելը կօգնի հավաստիանալ, որ մատակարարողները չեն աշխատում կամ ճամփորդում ավելի, քան թույլ է տրվում յուրաքանչյուր աշխատանքային շաբաթում: Բացի դրանից, ներկայացնելով այս պայմանագիրը մատակարարողները կարող են օգնել հավաստիանալ, որ նրանք կստանան Ճամփորդության հայցի ձևը, որն ավելի ուշ կուսումնասիրենք: Եվ հիշեք, որ այս պայմանագիրը կանխելու է հնարավոր հետաձգումները վճարման հարցում և օգնելու է մատակարարողներին խուսափել խախտումներից:

Այն ստացողները, որոնք ունեն մեկից ավելի մատակարարողներ, պետք է լրացնեն և ներկայացնեն IHSS ծրագրի ստացողի և մատակարարողի աշխատանքային շաբաթվա պայմանագիր:

Այս պայմանագիրը տեղեկացնում է վարչաշրջանն այն մասին, թե ինչքան ժամ է աշխատելու յուրաքանչյուր մատակարարողը ստացողի համար յուրաքանչյուր աշխատանքային շաբաթում:

Ստացողները պետք է թվարկեն բոլոր մատակարարողներին այս պայմանագրում:

Ստացողները և իրենց յուրաքանչյուր մատակարարողը պետք է ստորագրի նույն ձևաթուղթը և վերադարձնի վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ: Ստացողները և մատակարարողները պետք է անպայման լրացնեն և ներկայացնեն բոլոր իրենց կիրառելի պայմանագրերը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ կամ IHSS Հանրային իշխանություն:

Այժմ, երբ ուսումնասիրեցինք այս ձևաթղթերը, ժամանակն է ուշադրություն դարձնել ժամանակացույցներին ու դրանք ճիշտ լրացնելուն: Որպես կանոն, լավ միտք է, որ յուրաքանչյուր մատակարարող ու ստացող իր մոտ պահի ամեն օր աշխատած ժամերի ու բոլորների մասին գրանցումները: Մա կօգնի ապահովել ժամանակացույցների ճիշտ լրացումը:

Առաջին կանոնը ժամանակացույցները լրացնելիս այն է, որ պետք է միշտ օգտագործել սովորական գնդիկավոր գրիչ սև թանակով: Մի օգտագործեք մատիտ, փափուկ ծայրով մարկեր, կամ սև գույնից բացի այլ թանակ:

Լավ, եկեք դիտարկենք ժամանակացույցի մի նմուշ:

Սկզբից նկատեք, որ ձևաթուղթը բաղկացած է չորս բլոկերից՝ մեկ հատ յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա համար: Նկատեք նաև, որ այդ բլոկերը պիտակավորված են ըստ ամսաթվի ու շաբաթվա օրվա սկսած կիրակիից ու վերջացած շաբաթ օրով:

Նորից, օգտագործելով սև գնդիկավոր գրիչ՝ գրեք ժամերի ու րոպեների քանակն աշխատած ամեն օրվա համար ժամանակացույցում տրված վանդակներում:

Համոզվեք, որ բոլոր գրանցումները վանդակների ներսում են արվում:

Գումարեք շաբաթական աշխատած ժամերի ու րոպեների ընդհանուր քանակը ու գրեք այս թիվը յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ներքևում՝ Ընդհանուր հատվածի տակ: Համոզվեք, որ այդ գումարած ժամերը չեն գերազանցում ստացողի համար հաստատված ժամերը:

Երբ ժամերը գրված են, և ստացողը, և մատակարարողը պետք է ստորագրեն ու ամսագրեն ժամանակացույցի հետևում:

Վերջին քայլը ժամանակացույցը փոստով հետ ուղարկելն է կցված ծրարով: Մի ծալեք ու մի պատռեք ժամանակացույցը: Դրա փոխարեն, զգուշորեն կտրեք ժամանակացույցը կետագծի երկայնքով, տեղադրեք այն ծրարի մեջ, նամականիշ ավելացրեք ու փոստով ուղարկեք:

Ժամանակացույցների ճիշտ լրացումը կապահովի արագ մշակում ու վճարում: Ցուցումները տպված են ժամանակացույցի վրա, սակայն ահա մի քանի օգտակար խորհուրդներ.

- օգտագործեք միայն սև թանակ:
- Եվ ստացողը, և մատակարարողը պետք է ստորագրեն ու ամսագրեն ժամանակացույցի հետևում:
- Կտրեք կետագծի երկայնքով:
- Ժամանակացույցը մի ծալեք:
- Ժամանակացույցներում միայն գրեք աշխատած ժամերն ու րոպեները յուրաքանչյուր օրվա համար:
- Փոստով ուղարկեք միայն մեկ ժամանակացույց մեկ ծրարում:
- Ճիշտ նամականիշ տեղադրեք ծրարի վրա:

Մենք հույսով ենք, որ այս խորհուրդները կօգնեն մատակարարողներին ճիշտ լրացնել ու

ներկայացնել իրենց ժամանակացույցները:

Այժմ, երբ ուսումնասիրեցինք ժամանակացույցերը, եկեք քննարկենք ճամփորդության ժամանակը:

Մատակարարողներն այժմ իրավասու են ստանալ մինչև 7 ժամ ճամփորդության ժամանակի համար վճարում ամեն աշխատանքային շաբաթում, երբ նրանք աշխատում են մեկից ավել ստացողների համար տարբեր վայրերում նույն օրը, և ուղղակիորեն ճամփորդում են երկու ստացողների միջև ծառայություններ մատուցելու նպատակով:

Ճամփորդության ժամանակը չի ներառում այն ժամանակը, որը պահանջվում է մատակարարողներին իրենց սեփական տնից դեպի ստացողին ծառայություններ տրամադրելու վայր գնալը կամ հետ տուն վերադառնալը աշխատանքն ավարտելուց հետո: Մատակարարողի ժամանակը ստացողների միջև ճամփորդության համար չի հաշվարկվում որպես առավելագույն շաբաթական ժամերի մաս, և այն չի հանվում որևէ ստացողի ամսական հաստատված ժամերից:

Եթե մատակարարողները հայցում են ավելի քան 7 ժամ ճամփորդության համար աշխատանքային շաբաթում, նրանց կվճարեն ավելորդ ժամերի համար, սակայն նրանք խախտում կստանան:

Ճամփորդության ժամանակը հայցելու համար մատակարարողները պետք է լրացնեն Ճամփորդության հայցի ձևը:

Մատակարարողները, որոնք այժմ իրավասու են վճարում ստանալ ճամփորդության ժամանակի համար, կստանան Ճամփորդության հայցի ձևը նույն ծրարում իրենց ժամանակացույցների հետ միասին յուրաքանչյուր ստացողի համար, ում մոտ նրանք աշխատում են: Ճամփորդության ժամանակը հայցվում է այն ստացողի Ճամփորդության հայցի ձևի վրա, ում մոտ որ գնում է մատակարարողը: Օրինակ, եթե մատակարարողը 30 րոպե գնում է Ստացող Ա-ից դեպի Ստացող Բ, ապա մատակարարողը պետք է հայցի 30 րոպե ճամփորդության ժամանակը Ստացող Բ-ի Ճամփորդության

հայցի ձևի վրա:

Որպեսզի Ճամփորդության հայցի ձևերի համար վճարում տրամադրվի, սկզբից պետք է մշակվեն ժամանակացույցները: Ճամփորդության հայցի ձևերը կարող են ներկայացվել կամ համապատասխան ժամանակացույցի հետ միասին նույն վճարման ժամանակահատվածի համար, կամ այդ վճարման ժամանակահատվածից հետո:

Համոզվեք, որ լրացված ու ստորագրած Ճամփորդության հայցի ձևերն ուղարկվում են ճիշտ հասցեով:

Այժմ, երբ ծանոթացանք ժամանակացույցների ու Ճամփորդության հայցի ձևերի լրացման մեթոդին, եկեք ավելի մանրամասն քննարկենք աշխատանքային շաբաթվա սահմանափակումները:

Ստացողների համար լիազորվում են որոշակի քանակի ժամեր յուրաքանչյուր ամսում: Երբ մենք ներկայացրեցինք Առավելագույն շաբաթական ժամեր տերմինը, մենք բացատրեցինք, որ ստացողները փոստով կստանան տեղեկատվական ծանուցում՝ սկսած 2016 թ. փետրվարի 1-ից, որը ցույց կտա իրենց առավելագույն շաբաթական ժամերը՝ հիմնվելով իրենց լիազորված ամսական ծառայության ժամերի վրա:

Որոշ սահմանափակումներով և կախված ստացողի առողջական կարիքներից նրանք կարող են թույլ տալ իրենց մատակարարողներին աշխատել իրենց առավելագույն շաբաթական ժամերից ավել կամ պակաս: Ստացողները կարող են շաբաթից շաբաթ տեղափոխել ժամերը, եթե իրենց մատակարարողները չեն աշխատում ավելի, քան ամսական հաստատված ժամերը:

Որոշ դեպքերում ստացողներին հարկավոր է սկզբից ստանալ վարչաշրջանի հավանությունը: Այլ դեպքերում, ստացողները կարող են փոփոխել մատակարարողների ժամերն առանց վարչաշրջանի հավանության: Եկեք մանրամասնորեն քննարկենք սա:

Կարևոր է, որ ստացողները և մատակարարողներն իմանան, երբ է հարկավոր վարչաշրջանի հավանությունը:

Ստացողները պետք է ստանան վարչաշրջանի հավանությունը իրենց մատակարարողների շաբաթական աշխատանքի ժամերը փոփոխելու համար, երբ այդ փոփոխությունը պահանջում է, որ մատակարարողներն

աշխատեն.

- 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, եթե ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս,
- կամ Ավելի շատ արտաժամյա ժամեր ամսում, քան սովորաբար կաշխատեին:

Օրինակ, եթե առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս, ապա չկան հաստատված արտաժամյա ժամեր, և որևէ փոփոխություններ, որոնց հետևանքով մատակարարողը պետք է աշխատի 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում, կպահանջեն վարչաշրջանի հավանությունը: Այնուամենայնիվ, ստացողները կարող են թույլատրել իրենց մատակարարողների շաբաթական աշխատած ժամերի փոփոխությունն առանց վարչաշրջանի հավանության, երբ առկա են հետևյալ բոլոր երեք պայմանները.

- Կա միայն մեկ մատակարարող,
- Մատակարարողը չի աշխատում որևէ այլ ստացողների համար, և
- Մատակարարողի շաբաթական աշխատանքի ժամատախտակը փոփոխվում է այդ ամսվա մնացած աշխատանքային շաբաթներում՝ համոզվելու համար, որ նրանք չեն աշխատում ավելի, քան ամսական հաստատված ժամերը կամ հաստատված արտաժամյա ժամերը:

Ահա մեկ այլ օրինակ: Եթե առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 50, ապա շաբաթական ընդհանուր 10 արտաժամյա ժամեր արդեն հաստատված են: Քառասուն նորմալ ժամ և 10 արտաժամյա ժամ Քառասուն նորմալ ժամ և 10 արտաժամյա ժամ առավելագույն շաբաթական ժամերի համար, որոնք կազմում են մինչև շաբաթական 50 ժամ: Այսպիսով, ամսվա ընթացքում կա արտաժամյա ընդհանուր 40 ժամ, որոնք մատակարարողը կարող է աշխատել առանց ստացողի՝ վարչաշրջանից հավանություն խնդրելու:

Ամփոփելով, եթե մատակարարողը չի աշխատում ստացողի ընդհանուր ամսական հաստատված ժամերից կամ վարչաշրջանի կողմից

հաստատված արտաժամյա ժամերից ավել, մատակարարողի ժամանակացույցը կմշակվի սովորականի պես: Այնուամենայնիվ, եթե աշխատել են ավել ժամեր առանց վարչաշրջանի հավանության, մատակարարողը վճարվելու է, սակայն նա խախտում կստանա:

Ինչպես կպարզենք ավելի ուշ այս տեսահոլովակի Խախտումներ հատվածում, երեք խախտումները կհանգեցնեն երեք ամսվա հեռացմանը ծրագրից: Չորրորդ խախտումը կհանգեցնի աշխատանքից հեռացմանը մեկ տարով:

Ահա մի խորհուրդ մատակարարողներին, երբ աշխատում են իրենց ստացողների հետ ժամերը փոփոխելու համար: Այս հարցը տվեք՝ արդյո՞ք այս փոփոխությունն ավելացնում է արտաժամյա ժամերի քանակը, որոնց համար ես վճարվում եմ, որոնք գերազանցում են իմ ստացողի հաստատված արտաժամյա ժամերը:

Մատակարարողները կարող են պատասխանել՝ եթե ես աշխատում եմ 40 ժամից քիչ, դա որևէ ազդեցություն չի ունենա, ու այդ պատճառով ինձ վարչաշրջանի հավանություն հարկավոր չէ: Կամ, եթե ես շատ ժամեր եմ աշխատում յուրաքանչյուր ամիս, օրինակ՝ 283, ապա մեկ շաբաթից մյուս շաբաթ ժամերի տեղափոխությունը չի փոխում իմ հաստատված ամսական արտաժամյա ժամերի քանակը:

Ի լրում հասկանալուն, թե ինչպես կարելի է փոխել հաստատված ծառայության ժամերը, կարևոր է նաև իմանալ աշխատանքային շաբաթվա այլ սահմանափակումները:

- Ստացողները պատասխանատու են ամեն մատակարարողին ժամեր նշանակելու համար ու համոզվելու համար, որ մատակարարողներն աշխատում են միայն իրենց հատկացված շաբաթական ժամերի ընդհանուր քանակը, ինչպես փաստագրված է այս պայմանագրում:
- Ստացողները և մատակարարողները պետք է համոզվեն, որ բոլոր աշխատած ժամերը չեն գերազանցում ընդհանուր ամսական հաստատված ժամերը:

Եկեք դիտարկենք մատակարարողների դեպքը, ովքեր

աշխատում են մեկից ավելի ստացողների համար: Այս մատակարարողները կարող են աշխատել մինչև առավելագույնը 66 ժամ մեկ շաբաթում: Օրինակ, եթե մատակարարողին հատկացված է 40 ժամ մեկ աշխատանքային շաբաթում Ստացող Ա-ից, այս մատակարարողին կարելի է հատկացնել միայն առավելագույնը 26 ժամ աշխատանքային շաբաթում Ստացող Բ-ից:

66 ժամվա շաբաթական առավելագույն սահմանափակումը կիրառվում է միայն այն մատակարարողների համար, ովքեր աշխատում են մի քանի ստացողների մոտ:

Եթե մատակարարողն աշխատում է առավելագույն շաբաթական ժամերի 66 ժամն աշխատանքային շաբաթում, և իր ստացողներից մեկը խնդրում է, որ նա լրացուցիչ ժամեր աշխատի, ապա մատակարարողը կարող է անել դա միայն, եթե նվազեցնի մյուս ստացողի համար աշխատած ժամերի քանակը: Այլապես մատակարարողը պետք է ասի ստացողին, որ նա գտնի մեկ այլ մատակարարող լրացուցիչ ժամեր աշխատելու համար:

Պետք է հաշվի առնել նաև մեկ այլ դեպք, երբ ստացողն ունի մի քանի մատակարարողներ, որոնք աշխատում են միայն այս ստացողի համար: Ի՞նչ է տեղի ունենում, երբ այս մատակարարողներից մեկը հիվանդանում է կամ արձակուրդ է գնում:

Այս դեպքում ստացողը կարող է փոփոխել մյուս մատակարարողների ժամերն առանց վարչաշրջանի հավանության, եթե ստացողի ընդհանուր ամսական հաստատված ժամերը չեն գերազանցվում:

Մեկ այլ դեպքում մի մատակարարող, ով աշխատում է միայն մեկ ստացողի համար, կարող է խախտում ստանալ, երբ իր ստացողը փոփոխում է ժամերը, ինչի հետևանքով նա աշխատում է չափից շատ արտաժամյա ժամեր կամ գերազանցում է այս ստացողի ընդհանուր ամսական ժամերը, և վարչաշրջանից հավանություն չի ստացվել:

Եվ վերջապես, ստացողները կարող են դիմել իրենց վարչաշրջանի

տեղային IHSS գրասենյակ՝ խնդրելով իրենց առավելագույն շաբաթական ժամերի ժամանակավոր փոփոխություն, եթե պետք է փոխեն իրենց մատակարարողի շաբաթական ժամատախտակն անսպասելի կամ անսովոր իրավիճակների պատճառով՝ իր առողջական կարիքները հոգալու համար:

Դիմեք ձեր վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ այս փոփոխություններն անելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար:

Հիշեք, կարևոր է, որ ստացողները և մատակարարողները հետևեն բոլոր արտաժամյա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումներին խախտում ստանալուց խուսափելու համար: Խախտումը կարող է մատակարարողի՝ ծրագրից հեռացման պատճառ դառնալ, կամ նա կարող է հեռացվել IHSS մատակարարողի աշխատանքից:

Մատակարարողների համար խախտումների պատճառ հանդիսացող գործոցություններից են.

- աշխատել 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում իրենց ստացողի համար, ում առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս, և հետևաբար չկա հաստատված արտաժամյա ժամանակ,
- աշխատել աշխատանքային շաբաթում 66 ժամից ավել, երբ աշխատում են մեկից ավելի ստացողների համար, կամ հայցել ավելի քան 7 ժամ ճանփորդության համար մեկ աշխատանքային շաբաթում:

Եթե վարչաշրջանը որոշում է, որ մատակարարողը խախտել է շաբաթական արտաժամյա և/կամ ճամփորդության ժամանակի սահմանափակումները, վարչաշրջանը մատակարարողին կուղարկի խախտման ծանուցում՝ վարչաշրջանի վերանայում խնդրելու մասին տվյալներով: Ծանուցում կուղարկվի նաև բոլոր ստացողներին, ում մոտ որ աշխատում է այս մատակարարողը՝ տեղեկացնելով նրանց իրենց մատակարարողի խախտման մասին և բացատրելով, ինչու է մատակարարողը ստացել այն:

Ամեն խախտման համար, որը ստանում է մատակարարողը, լինելու են հետևանքներ.

- Առաջին խախտման համար մատակարարողն ու իր բոլոր ստացողները կստանան ծանուցում խախտման մասին վարչաշրջանի վերանայում խնդրելու մասին տվյալներով:
- Երկրորդ խախտման դեպքում մատակարարողն ընտրություն կունենա անցնել մեկ անգամյա վարժեցում աշխատանքային շաբաթվա ու ճամփորդության ժամանակի սահմանափակումների մասին ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում: Եթե մատակարարողը որոշում է անցնել վարժեցումը, նա չի ստանա երկրորդ խախտում: Եթե նրանք չանցնեն այս վարժեցումը, նրանք կստանան երկրորդ խախտում:
- Երրորդ խախտման դեպքում մատակարարողին կհեռացնեն IHSS մատակարարողի աշխատանքից երեք ամսով:
- Չորրորդ խախտման դեպքում մատակարարողը կհեռացվի IHSS մատակարարողի աշխատանքից մեկ տարով:

Եթե մատակարարողն ունենա ավելի քան մեկ խախտում մեկ օրացուցային ամսում, դա հաշվարկվելու է որպես միայն մեկ խախտում:

Եթե մատակարարողները խախտում են ստանում, նրանք ունեն 10 աշխատանքային օր խախտման ծանուցման ամսաթվից վարչաշրջանի վերանայում խնդրելու համար: Երբ վարչաշրջանը ստանում է վերանայման խնդրանքը, այն ունի 10 աշխատանքային օր խախտումը վերանայելու ու ուսումնասիրելու համար, և մատակարարողին ծանուցում ուղարկելու համար՝ տեղեկացնելով, արդյոք խախտումը մնում է անփոփոխ, թե չեղարկվում է:

Երրորդ և չորրորդ խախտումների համար, եթե վարչաշրջանը չի չեղարկում խախտումը, մատակարարողները կարող են վերանայում խնդրել Կալիֆոռնիայի Սոցիալական ծառայությունների բաժանմունքից, կամ CDSS, 10 աշխատանքային օրվա ընթացքում վարչաշրջանի ծանուցումը ստանալու ամսաթվից հետո:

Վարչաշրջանի ծանուցումը կբացատրի՝ ինչպես

մատարակարողները կարող են վերանայում խնդրել CDSS-ից:

Երբ մատակարարողները խախտում են ստանում, այն մնում է իրենց IHSS արձանագրության մեջ: Այնուամենայնիվ, մեկ տարուց, եթե նրանք չստանան որևէ այլ խախտում, նրանց ստացված խախտումների քանակը կնվազեցվի մեկով:

Քանի դեռ մատակարարողները չեն ստանում որևէ լրացուցիչ խախտումներ, ապա վերջին խախտման չեղարկումից հետո ամեն տարի խախտումների քանակը կնվազեցվի մեկով, և եթե մատակարարողները ստանում են չորրորդ խախտումն ու հեռացվում են IHSS մատակարարողի աշխատանքից մեկ տարով, ապա երբ այդ տարին լրանա, ու նրանք կրկին դիմեն IHSS մատակարարողի աշխատանքի համար, նրանք պետք է՝ կրկին դիմում ներկայացնեն, և կատարեն մատակարարողի անդամագրման բոլոր պահանջները, ներառյալ՝ քրեական պատմության ստուգում, մատակարարողի կողմնորոշում և լրացնեն բոլոր անհրաժեշտ ձևերը: Նրանց խախտումների հաշվարկը կսկսի զրոյից: Եկեք ամփոփենք:

Խախտումից խուսափելու համար մատակարարողները պետք է խուսափեն.

- Աշխատել 40 ժամից ավել աշխատանքային շաբաթվա ընթացքում առանց իրենց ստացողի՝ վարչաշրջանից ստացված հավանության, երբ ստացողի համար հաստատվել է 40 ժամից պակաս աշխատանքային շաբաթում:
- Աշխատել ստացողի համար ավել ժամեր, քան հաստատվել են նրա համար աշխատանքային շաբաթում, ինչի պատճառով մատակարարողն աշխատում է ավելի շատ արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան սովորաբար կաշխատեր:
- Աշխատել մեկից ավելի ստացողների համար և աշխատել 66 ժամից ավել աշխատանքային շաբաթում:
- Հայցել 7 ժամից ավել ճամփորդության համար մեկ աշխատանքային շաբաթում:

Խախտումների մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր

վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ կամ IHSS Հանրային իշխանություն:

Այժմ մենք ավարտեցինք IHSS ծրագրի փոփոխությունների մեր վերանայումը: Որպես օգտակար հիշեցում, ահա մեր վերանայման մի քանի հիմնական կետեր.

Սահմանված աշխատանքային շաբաթը սկսում է կիրակի, ժամը 12 a.m.-ից մինչև հաջորդ շաբաթ օրվա ժամը 11:59 p.m.-ը:

Մատակարարողները չպետք է աշխատում ավելի, քան իրենց հատկացված ընդհանուր առավելագույն շաբաթական ժամերն առանց համապատասխան հավանության:

Այն մատակարարողները, որոնք աշխատում են մեկից ավելի ստացողների համար, չեն կարող աշխատել 66 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում:

Մատակարարողները չպետք է ճամփորդեն 7 ժամից ավել մեկ աշխատանքային շաբաթում:

Ճամփորդության ժամանակը գրանցվում է այն ստացողի Ճամփորդության հայցի ձևում, ում մոտ որ գնում է մատակարարողը:

Եվ ստացողները, և մատակարարողները պետք է հասկանան, երբ է անհրաժեշտ վարչաշրջանի հավանությունը ժամերի փոփոխության համար:

Խախտումները IHSS ծրագրի արտաժամյա և ճամփորդության ժամանակի սահմանափակումներին չհետևելու արդյունքն են:

IHSS ժամանակացույցները ճիշտ լրացնելը կօգնի մատակարարողներին ժամանակին վճարումներ ստանալ, խուսափել ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել ժամեր հայցելուց, և կանխել որևէ սխալներ, որոնք կարող են խախտումների կամ IHSS ծրագրից հեռացման պատճառ հանդիսանալ:

Մենք հույսով ենք, որ այս տեսահոլովակն օգնեց IHSS
ստացողներին և մատակարարողներին ավելի լավ հասկանալ
IHSS ծրագրի փոփոխությունները: Լրացուցիչ հարցեր ունենալու
դեպքում դիմեք ձեր վարչաշրջանի տեղային IHSS գրասենյակ
կամ IHSS Հանրային իշխանություն, կամ այցելեք Կալիֆորնիայի
Սոցիալական ծառայությունների բաժանմունքի Տնային
աջակցության ծառայությունների կայքէջը: